

Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն



ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍՈՒ
Նահանգապետ

29-ը հունիսի, 2021թ.

Թարմացված ուղեցույց՝
Երեխայի խնամքի մատակարարների և ծրագրերի վերաբերյալ

ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

Կալիֆորնիայի Նահանգը շարունակում է ձեռնարկել գործողություններ, որոնք պաշտպանում են Կալիֆորնիայում գտնվող մարդկանց առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունը: Քանի որ բիզնեսներն ու գործունեության ոլորտները վերաբացվում են, ուղեցույցը թարմացվել է կորոնավիրուսային հիվանդության 2019 (COVID-19) ժամանակ վարակի վերահսկման գործընթացների համար: Ակնկալվում է, որ երեխայի խնամքի յուրաքանչյուր ծրագիր կշարունակի նվազագույնի հասցնել COVID-19-ի տարածումը և ապահովել երեխաների, մատակարարների և ընտանիքների անվտանգությունը: Բոլոր մատակարարները պետք է կիրառեն Նոր և թարմացված քաղաքականություն և պահանջներ, որոնք ուղղված են վարակի շարունակական վերահսկման անհրաժեշտությանը և պետք է թարմացնեն արտակարգ իրավիճակների համար իրենց պատրաստվածության գործողությունների պլանը:

Այս ուղեցույցն, երեխայի խնամքի մատակարարներին և նրանց կողմից մատակարարվող ընտանիքներին, տեղեկացնում է վարակի վերահսկման գործընթացների մասին, որոնք կանխում և մեղմում են COVID-19 վարակի տարածումը հաստատություններում: Մատակարարների համար կարևոր է ընտանիքների և անձնակազմի հետ պահպանել հաճախակի հաղորդակցություն իրականացվող քաղաքականության և գործընթացների վերաբերյալ բոլորի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Այս ուղեցույցը փոխարինում է Նախկին COVID-19 ուղեցույցներին՝ COVID-19-ի վերաբերյալ նորացված ուղեցույցում՝ [«Երեխայի խնամքի ծրագիր և մատակարարներ»](#), թվագրված՝ 2020 թվականի հուլիսի 17-ին:

Արտոնագրված անձինք և երեխայի խնամքի այլ մատակարարներ պետք է շարունակեն հետամուտ լինել COVID-19-ի պահանջներին և ուղեցույցին՝ Կալիֆորնիայի դեպարտամենտի բոլոր կիրառելի սոցիալական ծառայություններում (CDSS) և համայնքային խնամքի արտոնագրման (CCL) մատակարարի տեղեկատվության

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ
Նահանգապետ

ծանուցումներում(PIN), ի լրումն [Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտի \(CDPH\)](#), [Կալիֆորնիայի արդյունաբերական կապերի դեպարտամենտի աշխատանքի անվտանգության և առողջապահության բաժնի \(Cal/OSHA\)](#), և [հանրային առողջապահության տեղական դեպարտամենտների](#) ուղեկցիների կամ պահանջների, որոնք կիրառելի են որոշակի հաստատության համար:

Եթե CDPH, CCL, Cal/OSHA և առողջապահության տեղական դեպարտամենտի ուղեկցիների կամ առողջապահական ոլորտի հրահանգների ամենավերջին տարբերակների միջև առկա են տարբեր պահանջներ, ապա արտոնագրված անձինք և մատակարարները պետք է հետամուտ լինեն խստագույն պահանջներին: Սույն ուղեցույցի իրականացումը պետք է հարմարեցվի այն պայմանների համար, որտեղ դուք խնամքի ծառայություններ եք մատուցում, և կարող է պահանջել անձնակազմի ուսուցում և աջակցություն, ինչպես նաև երեխաների և ընտանիքի կարիքների պատշաճ դիտարկում:

Կալիֆորնիայում աշխատավայրի անվտանգության և առողջապահության վերաբերյալ կանոնակարգերը գործատուներից պահանջում են միջոցներ ձեռնարկել վարակիչ հիվանդությունների ենթարկված աշխատողներին պաշտպանելու համար: Այն արտոնագրված անձինք և մատակարարները, որոնց վրա տարածվում են [Cal/OSHA COVID-19-ի կանխարգելման արտակարգ ժամանակավոր ստանդարտները](#), պետք է համապատասխանեն սույն Ստանդարտներին:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

- Արտոնագրված անձինք և մատակարարները **պետք է** շարունակեն մեղմել COVID-19-ի տարածումը: Վերանայեք [Cal/OSHA COVID-19-ի վերաբերյալ ուղեկցիներն ու ռեսուրսները](#)՝ իրականացնելու քայլեր՝ անձնակազմը պաշտպանելու և COVID-19 վիրուսի ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:
- **Cal/OSHA COVID-19-ի կանխարգելման ծրագիրը (CPP)** գործողությունների գրավոր պլան է, որը **պահանջվում է** Cal/OSHA COVID-19-ի արտակարգ իրավիճակներում ժամանակավոր ստանդարտների համաձայն: Լրացուցիչ մանրամասների և ձևանմուշ մուտք գործելու համար, այցելեք

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ
Նահանգապետ

[COVID-19-ի կանխարգելման արտակարգ իրավիճակներում ժամանակավոր ստանդարտների](#) կայք:

- Հաստատությունները պետք է ունենան գործողությունների գրավոր պլան այն դեպքի համար, երբ երեխան կամ անձնակազմի անդամ, ով շփվել է COVID-19-ով հիվանդ ինչ-որ անձի հետ, ունի COVID-19 [սխտանիշներ](#) կամ նրա COVID-19-ը թեստի արդյունքը դրական է:
- Խորհուրդ է տրվում ծնողների, խնամակալների և խնամողների հետ հաղորդակցման գրավոր պլանի մշակում նրանց նախընտրած լեզվով տեղեկատվություն և ուղեցույցներ փոխանակելու համար:
- CDPH [COVID-19 դեպքերի և շփման շրջանակի կառավարում երեխայի խնամքի հաստատությունների](#) համաձայն, իրականացնել անհրաժեշտ գործընթացներն ու ընթացակարգերը, երբ աշխատավայրում տեղի է ունենում բռնկում:

COVID-19 ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐ

- CDC-ը խստորեն խրախուսել է պատվաստումն՝ որպես COVID-19 համաճարակն ավարտելու ամենակարևոր գործիքներից մեկը: Արտոնագրված անձինք և մատակարարներն իրավունակ են ստանալ անվճար պատվաստում: Պատվաստում ստանալու մի քանի եղանակ գոյություն ունի: Խնդրում ենք դիտել [PIN 21-06-CCP](#)-ը պատվաստանյութի անվտանգության, օգուտների և պատվաստանյութը ստանալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:
- Խնդրում ենք կիսվեք պատվաստանյութերի վերաբերյալ տեղեկատվությամբ անձնակազմի և ընտանիքների հետ, և հղում կատարեք COVID-19-ի դեմ պատվաստանյութերի վերաբերյալ Կալիֆորնիայի կայքի [գլխավոր էջ](#):
- Եթե արտոնագրված անձը կամ մատակարարը պահանջում է հաստատել, որ անձնակազմը կամ երեխան ստացել են COVID-19-ի դեմ պատվաստանյութ, խորհուրդ է տրվում, որ հաստատումը փաստաթղթավորվի նույն կերպ, ինչպես պատվաստումներն են փաստաթղթավորվում և պահվում հաստատության գործերում: Հաստատողները կարող են վերանայել և ընդունել պատվաստանյութի ստացման թղթային պատճեն կամ թվային գրառումը:

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արևիկ 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն



ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՈՍ
Նահանգապետ

ԹԵՍԱՎՈՐՈՒՄ

- Թեստավորումը COVID-19-ի կանխարգելման բազմամակարդակ մոտեցման մեկ մակարդակն է: Թեստավորման մասին լրացուցիչ տեղեկատվության համար, խնդրում ենք դիտել՝ [COVID-19-ի թեստավորման վերաբերյալ նորագված ուղեցույցը](#):

ԴԵՄԻ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

- Երեխայի խնամքի մատակարարները **պետք է** գործեն CDPH-ի [դիմակների օգտագործման վերաբերյալ ընթացիկ ուղեցույցին](#) համապատասխան: 2021 թվականի հունիսի 15-ի դրությամբ, Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտը (CDPH) և Աշխատանքի անվտանգության և առողջապահության բաժինը (Cal /OSHA) պահանջում են դիմակի օգտագործում երեխայի խնամքի ծառայության մատուցման **փակ տարածքներում** անկախ պատվաստման կարգավիճակից:
- Նորածինների կամ 2 տարեկանից ցածր երեխաների համար մի օգտագործեք դեմքի ծածկոցներ, քանի որ դրանք առաջացնում են շնչափութի վտանգ և ռիսկ:
- Երեխաները քնած ժամանակ չպետք է դեմքի ծածկոցներ կրեն:
- Երեխայի խնամքի մատակարարներն ու արտոնագրված անձինք պետք է ապահովեն, որպեսզի դեմքի ծածկոցի օգտագործումն երեխայի մոտ չառաջացնի գերտաքացում շոգ եղանակին:

ԱՆՐԱՎԺԵՇ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Օգտագործեք ստորև բերված աղյուսակն արագ հղում կատարելու պաշտպանիչ սարքավորումներ և պարագաներ, որոնք օգտագործվում են երեխայի խնամքի պայմաններում: Դեմքի ծածկոցների, ձեռքերի հիգիենայի և ախտահանման և մաքրման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը տրամադրվում է այս փաստաթղթում:

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍՍ
Նահանգապետ

Առարկաներ	Երեխայի խնամքի կենտրոններ	Երեխաներ
Դեմքի պաշտպանիչ միջոցներ	Այո Երեխայի խնամքի մատակարարները պետք է գործեն CDPH-ի դիմակների օգտագործման վերաբերյալ ընթացիկ ուղեցույցին համապատասխան:	Այո 2 տարեկանից բարձր երեխաներին պետք է սովորեցնել և հիշեցնել, որ անհրաժեշտ է կրել դիմակ:
Ձեռնոցներ	Այո , այնպիսի հանձնարարությունների համար, ինչպիսիք են սնունդ մատուցելը, բարուրելը, աղբ հեռացնելը կամ մաքրող և ախտահանող միջոցներ օգտագործելը	Ոչ
Ձեռքի ախտահանիչներ Պետք է պարունակի առնվազն 60% էթիլ սպիրտ (նախընտրելի) կամ առնվազն 70% իզոպրոպիլ տեսակի սպիրտ (նեյրոտոքսիկ և աչքի գրգռիչ): ՆԱԽԱՉԳՈՒՇԱՑՈՒՄ. Մի օգտագործեք մեթանոլ պարունակող ապրանքներ	Այո, ոչ պարտադիր Նշենք, որ հաճախակի ձեռքեր լվանալից ավելի արդյունավետ է, քան ձեռքի ախտահանիչ միջոցների օգտագործումը	Այն կարող է օգտագործվել միայն մեծահասակների հսկողության ներքո և պետք է հեռու պահել երեխաների հասանելիությունից: Իմելու դեպքում, զանգահարե՛ք թունավորումների վերահսկման կենտրոն՝ 800-222-1222 հեռախոսահամարով: Նշենք, որ ձեռքերի հաճախակի լվացումն

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 | Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն



ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ
Նահանգապետ

		ավելի արդյունավետ է, քան ձեռքի մաքրող միջոցները: Մաքրող միջոցն անհրաժեշտ է քսել երեխաների ձեռքերին, մինչև ամբողջովին չորանա: Ձեռքի մաքրող միջոցը խորհուրդ չի տրվում 24 ամսականից ցածր երեխաների համար:
Ախտահանիչ մաքրող միջոցներ	Այո Տրամադրել դասընթացներ և պահանջվող պաշտպանիչ սարքավորումներ՝ ըստ արտադրողի առաջարկությունների: Անհրաժեշտ է հեռու պահել երեխաների հասանելիությունից:	Ոչ

Նշում՝ Երեխայի ինամքի մատակարարները և արտոնագրված անձինք կարող են
կապվել իրենց տեղամասի [երեխայի ինամքի ռեսուրսների և տեղեկատվական
գործակալությունների](#) կամ [առաջին 5 տեղական](#) գրասենյակների հետ՝ անհատական
պաշտպանիչ սարքավորումներ (PPE) և պարագաներ ձեռք բերելու վերաբերյալ
տեղեկատվություն ստանալու համար:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԽՍԲԵՐ

- Ֆիզիկական հեռավորության պահպանումը վարակի վերահսկման լավագույն մեթոդն
է, որը կարող է իրականացվել որպես լրացուցիչ անվտանգության մակարդակ
երեխաների և անձնակազմի միջև՝ COVID-19-ի տարածումը նվազեցնելու համար:

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Զ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ
Նահանգապետ

- Երեխայի ինսամքի կառույցները սովորաբար ունեն կայուն խմբային մոդել՝ անձնակազմի և երեխաների ամենօրյա նույն խմբերով, և արտոնագրված անձինք և մատակարարները պետք է դիտարկեն կայուն խմբերի ստեղծման հնարավորությունները որպես լավագույն փորձ:
- Անձնակազմը պետք է հետամուտ լինի [Cal/OSHA ETS](#)-ին՝ ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջների կատարման համար:

ՕՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Օղափոխությունն [առողջ միջավայրի պահպանման](#) բաղկացուցիչներից մեկն է, և [երեխայի](#) ինսամքի ծրագրերի համար COVID-19-ի կանխարգելման կարևոր ռազմավարությունը: Լավ օղափոխությունը ևս մեկ քայլ է, որը կարող է նվազեցնել օդում վիրուսի մասնիկների քանակը: [Այլ կանխարգելիչ գործողությունների](#) հետ մեկտեղ, օղափոխությունը կարող է նվազեցնել հիվանդության տարածման հավանականությունը, և օգնել ապահովել անվտանգ և առողջ միջավայր ինսամքի տակ գտնվող երեխաների համար: (Տե՛ս օրինակ, օղափոխության վերաբերյալ Գլուխ 22-ի [պահանջները](#), Կալիֆորնիայի կանոնակարգերի օրենսգրքի (CCR) [101216\(ե\)\(2\)](#), [101223\(ա\)\(2\)](#), [101238\(ա\)](#), [102416\(գ\)](#), [102417\(բ\)](#), և [102423](#) բաժինները):

- Բոլոր այն ձեռնարկություններին, որոնց թույլատրվում է գործել փակ տարածքներում, պետք է հետամուտ լինեն [օղափոխության, զտման և օդի որակի վերաբերյալ](#) CDPH-ի առաջարկվող միջանկյալ ուղեցույցին: Այս ուղեցույցը ներառում է գործնական քայլեր՝ բարելավելու օղափոխությունը, զտումը և օդի որակը փակ տարածքներում COVID-19-ի տարածումը նվազեցնելու և շենքերի և տարածքների անվտանգությունն ապահովելու համար:
- Մտածեք, թե ինչպես անվտանգ կերպով մաքուր օդ ապահովել երեխայի ինսամքի հաստատություն:
- Բաց լուսամուտների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, դիտարկե՛ք երեխաների համար անվտանգ օղափոխիչների օգտագործումը: Ուղղեք օղափոխիչներն օդը **դեպի դուրս** փչելու համար: Կարելի է նաև օդում վիրուսի

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արևի 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



ԲԺ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Զ. ԱՐԱԳՈՆ

Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ

Նահանգապետ

մասնիկների քանակի նվազեցման այլ մոտեցումներ դիտարկել, ինչպիսիք են օդազտիչ
և արտանետիչ օդափոխիչների օգտագործումը:

- Նույնպես կարևոր է օդափոխություն ապահովել ձեր տրանսպորտային միջոցների
ներսում, ինչպիսիք են ավտոբուսները կամ միկրոավտոբուսները: Խորհուրդ է տրվում
բացել պատուհանները՝ դրսից օդի հոսքը մեծացնելու համար, երբ դա անվտանգ է:
- Երեխայի խնամքի հաստատությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն
կարելի է գտնել CDC-ի էջում՝ [Օդափոխությունը դպրոցներում և երեխայի խնամքի
ծրագրերում](#):

ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ԱՆՏԱՀԱՆՈՒՄ

Մակերեսների մաքրումն ու ախտահանումը կարող է նվազեցնել վարակի վտանգը:
Վերապատրաստեք և մշտադիտարկեք անձնակազմին հետևելու վարակի վերահսկման
ստորև բերված մեթոդներին, կապված՝ մաքրման և ախտահանման պահանջների,
տնային տնտեսության և սանիտարական մաքրման սկզբունքների և համընդհանուր
առողջապահական նախազգուշական միջոցների հետ: (Տե՛ս մաքրման և ախտահանման
պահանջները՝ համաձայն [CCR-ի 101216\(ե\)\(2\)](#), [102416\(գ\)](#), [101238\(ա\)](#) և [102417\(բ\)](#)
բաժինների): Այս մեթոդները նաև օգնում են ապահովել շենքերի ու տարածքների
մաքուր, անվտանգ և սանիտարահիգիենիկ վիճակը, և անվտանգ ու կենցաղային
բարենպաստ պայմաններով կացարանի անձնական իրավունքը: (Տե՛ս օրինակ, մաքրման
և կենցաղային բարենպաստ պայմաններով կացարանների **պահանջները**, համաձայն՝
Գլուխ 22-ի CCR [101216\(ե\)\(2\)](#), [101223\(ա\)\(2\)](#), [101238\(ա\)](#), [102417\(բ\)](#), և [102423](#)
բաժինների):

- Կարևոր է իմանալ տարբերությունը մաքրման, սանիտարականացման, և
ախտահանման միջև, և երբ կիրառել յուրաքանչյուրը՝ երեխայի խնամքի առողջ
միջավայրը և խնամվող երեխաների բարեկեցությունը պահպանելու համար: Տե՛ս [ձեռ
հաստատությունը մաքրելու և ախտահանելու](#) վերաբերյալ CDC ուղեցույցը՝ ստանալու
մանրամասն տեղեկատվություն վարակի վերահսկման մեթոդների վերաբերյալ,
կապված՝ մաքրման և ախտահանման հետ:

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արևիկ 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ

Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ

Նահանգապետ

- Լվացքը, ինչպիսիք են հագուստը և անկողնային պարագաները, անհրաժեշտ է լվանալ օգտագործելով տաք ջրի համապատասխան կարգավորումներ, և թույլ տալ, որպեսզի այն ամբողջությամբ չորանա: Եթե գործ ունեք հիվանդ անձի կեղտոտ լվացքի հետ, ապա կրեք ձեռնոցներ և դիմակ: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել [PIN 20-11-CCLD](#)-ում:
- Մաքրման միջոցներ ախտահանիչներ ընտրելիս, օգտագործեք COVID-19-ի դեմ օգտագործման համար հաստատված և [Շրջակա միջավայրի պահպանության գործակալության \(EPA\) կողմից հաստատված «N» ցանկում](#) ներառված արտադրատեսակներ, և հետևեն արտադրատեսակի օգտագործման ցուցումներին:
- Միշտ հետևեք պիտակի վրա նշված ցուցումներին՝ ապրանքի անվտանգ և արդյունավետ օգտագործումն ապահովելու համար:
- Առողջ դպրոցների մասին օրենքը պահանջում է, որ յուրաքանչյուր անձ, ով երեխայի խնամքի կենտրոններում օգտագործում է ախտահանիչներ, պետք է ավարտի թունաքիմիկատների կանոնակարգման Կալիֆորնիայի դեպարտամենտի կողմից հաստատված տարեկան վերապատրաստումը: Առցանց դասընթացը կարելի է գտնել՝ այցելելով [Կալիֆորնիայի դպրոցներում և երեխայի խնամքի հաստատություններում վնասատուների դեմ միասնական պայքար](#) հղմամբ: Նշում՝ սա չի վերաբերում երեխայի ընտանեկան խնամքի տներին:

Ձեռքերի Լվացում Եվ Հիգիենա

Անձնական հիգիենայի ստորև բերված մեթոդների կիրառումը կարող է նվազեցնել վարակի վտանգը: Վերապատրաստեք և մշտադիտարկեք անձնակազմին հետևելու խստորեն առաջարկվող համընդհանուր առողջապահական նախագրուշական միջոցներին և կանխարգելիչ առողջապահական մեթոդներին: (Տե՛ս ձեռքերի լվացման և հիգիենայի **պահանջները**, Գլուխ 22-ի CCR [101216\(ե\)\(2\)](#) և [102416\(գ\)](#) բաժիններում):

- Սովորե՛ք CDC-ից՝ [ինչպես ընտրել, կրել և մաքրել ձեր դիմակը](#): Դիմակները պետք է հաճախակի լվացվեն:

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն



ԳԵՎԻՆ ՆՅՈՒՄՍ
Նահանգապետ

ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ

Երեխայի ինսամքի ծրագրերը **պետք է** բացառեն կամ մեկուսացնեն վարակիչ հիվանդության կամ հիվանդության ախտանիշներ ցուցաբերող ցանկացած երեխայի, ծնողի, ինսամողի կամ աշխատակազմի անդամի, ինչպես դա **պահանջվում է** Գլուխ 22-ի համաձայն՝ [CCR 101216\(դ\)](#), [101226.1\(ա\)\(1\)](#) և [102417\(ե\)](#) բաժիններում:

- [Ձեռնարկեք գործողությունը մեկուսացնելու](#) երեխաներին, որոնց մոտ ինսամքի ընթացքում սկսում են ի հայտ են գալ COVID-19-ի ախտանիշներ, այլ երեխաներից և անձնակազմից:
- Ապահովեք, որ մեկուսացված երեխաները շարունակեն ստանալ համապատասխան ինսամքի վերահսկողություն, և որ երեխայի առողջությունը մշտապես դիտարկվի ողջ օրվա ընթացքում՝ համաձայն արտոնագրման պահանջների:
- Եթե անհատի մոտ, ով բնակվում է երեխայի ընտանեկան ինսամքի տանն, ի հայտ են գալիս COVID-19 ախտանիշներ, հաստատությունը պետք է հետամուտ լինի [հանրային առողջապահության ուղենիշներին](#), կապված՝ կարանտինի կամ մեկուսացման հետ:
- COVID-19-ի ցանկացած հաստատված դեպքի մասին անհապաղ տեղեկացրեք տեղական առողջապահության պաշտոնատար անձանց, անձնակազմին և ընտանիքներին:

ՍՆՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԿԵՐԱԿՐԻ ԺԱՄԵՐ

Կերակրի ժամերի փոփոխություններ կարող են կատարվել՝ COVID-19-ի տարածումը մեղմելու նպատակով:

- Խորհուրդ է տրվում տեղափոխել սեղաններն երեխաների հեռաբաշխելու կամ օգտագործել անվանական քարտեր երեխաների համար համապատասխան հեռավորություն ապահովելու համար:
- Արտոնագրված անձինք և մատակարարները պետք է հետամուտ լինեն ձեռքի լվացման, մաքրման և ախտահանման պատշաճ մեթոդներին ուտելուց առաջ և հետո: Հետևեք [CDC](#)-ի և [CACFP](#)-ի սննդամթերքի գործածման վերաբերյալ COVID-19 ուղենիշներին:

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



ԲԺ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Զ. ԱՐԱԳՈՆ
Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ
Նահանգապետ

- Իրականացրեք բացօթյա կերակրի ժամեր, եթե տարածքն ու եղանակը թույլ են տալիս:

ԻՆՉՊԵՍ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ ԿԱՍ ԲՈՆԿՈՒՄԵՐԻՆ

Արտոնագրված անձինք և ծառայություն մատուցողները պետք է ունենան գործողությունների պլան COVID-19-ի ազդեցությանը կամ բռնկումներին արձագանքելու համար:

- Հիվանդության ազդեցությանն ենթարկվելու դեպքում, դիտարկեք առաջարկությունների իրականացումը՝ [COVID-19 դեպքերի և շփման շրջանակի կառավարում երեխայի ինամֆի հաստատություններում](#) և [COVID-19-ին առնչվող ինդիքների արձագանքում աշխատավայրում գործատուների համար](#):
- Ակտիվորեն խրախուսե՛ք անձնակազմին և ընտանիքներին հաստատությանը հայտնել, եթե նրանց COVID-19-ի թեստը դրական է կամ շփվել են COVID-19 ախտանիշներով ինչ-որ անձի կամ հաստատված կամ կասկածելի դեպքի հետ:
- Գործատուներից **պահանջվում է** COVID-19 դրական դեպքերի մասին աշխատավայրում հաղորդել տեղական առողջապահության դեպարտամենտ: Հետևեք Cal/OSHA արտակարգ իրավիճակներում ժամանակավոր ստանդարտներին [COVID-19-ի վերաբերյալ հաշվետվության համար](#):
- Երեխայի ինամֆի կենտրոններից **պահանջվում է** համաճարակային բռնկումների մասին հաղորդել CDSS Համայնքային ինամֆի արտոնագրման բաժին (CCLD)՝ իրենց [տեղական տարածաշրջանային գրասենյակի](#) միջոցով, ինչպես **պահանջվում է** Գլուխ 22-ի, [CCR 101212\(դ\) բաժնի](#) համաձայն: Երեխայի ընտանեկան ինամֆի տները վարակիչ հիվանդության բռնկման մասին **պետք է** հաղորդեն CCLD-ին, երբ դա որոշվում է տեղական առողջապահական մարմնի կողմից, իրենց տեղական տարածաշրջանային գրասենյակի միջոցով՝ Գլուխ 22-ի, [CCR 102416.2\(գ\)\(3\) բաժնի](#) համաձայն:

ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

COVID-19 համաճարակը մեծ ազդեցություն է ունեցել մեր կյանքի վրա: Շատերը բախվում են մարտահրավերների, որոնք կարող են լինել սթրեսային, ճնշող և առաջացնել

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov



Կալիֆորնիայի Նահանգ, Առողջապահության և մարդկային
ծառայությունների գործակալություն

Կալիֆորնիայի հանրային առողջապահության դեպարտամենտ



Բժ., Ա. Դոկտոր ԹՈՄԱՍ Ջ. ԱՐԱԳՈՆ

Հանրային առողջապահության ներկայացուցիչ և տնօրեն

ԳԵԿԻՆ ՆՅՈՒՄՍ

Նահանգապետ

ուժեղ հույզեր մեծահասակների և երեխաների մոտ: COVID-19 համաճարակի ժամանակ
բնական է սթրեսը, հուզմունքը, վիշտը և անհանգստության զգացումը: Ստորև բերված
են մի քանի առաջարկություններ, որոնք կօգնեն ինքներդ ձեզ, աշխատակազմին,
երեխաներին և ընտանիքներին կառավարել սթրեսը:

- Կալիֆորնիայի [COVID-19-ի ժամանակ սթրեսից ազատման](#) վերաբերյալ գրքույկև ուղեցույցներ է տրամադրում երեխաների մոտ սթրեսը նկատելու վերաբերյալ և նախանշում գործիքներ և ռազմավարություններ՝ երեխաների և մեծահասակների մոտ սթրեսը նվազեցնելու համար:
- Խթանե՞ք առողջ սննդի օգտագործումը, քունը և ֆիզիկական ակտիվության սովորությունները և ինքնախնամքը:
- Զննարկե՞ք և փոխանակե՞ք սթրեսի նվազեցման ռազմավարություններ:
- Խրախուսե՞ք անձնակազմին և երեխաներին խոսել իրենց հուզող հարցերի և ապրումների մասին այն մարդկանց հետ, ում վստահում են:
- Բաց կերպով և հաճախ հաղորդակցվե՞ք աշխատակազմի, երեխաների և ընտանիքների հետ համայնքում հասանելի հոգեկան առողջության պահպանման ծառայությունների մասին, ներառյալ, եթե ծրագրի շրջանակում հասանելի է հոգեկան առողջության վերաբերյալ խորհրդատվությունը:
- Դիտարկե՞ք ցուցանակներ փակցնելու հնարավորությունը [CalHOPE](#)-ի և «Ծանր իրավիճակների» հարցերով ազգային թեժ գծի համար՝ 1-800-985-5990, կամ ուղարկել հաղորդագրություն [TalkWithUs](#) (խոսեք մեզ հետ) 66746 համարին:
- Խրախուսե՞ք անձնակազմին զանգահարել «Ինքնասպանությունների կանխարգելման ազգային կենսակենտրոն» 1-800-273-TALK (1-800-273-8255), իսպաներենի համար՝ 1-888-628-9454 հեռախոսահամարներով, կամ դիմել [Ճգնաժամային իրավիճակների կառավարման կենսակենտրոնի գրուցարան](#), եթե նրանք [հույզերով ճնշված են զգում](#), ինչպիսիք են տխրությունը, դեպրեսիան կամ հուզմունքը, կամ զանգահարել 911, եթե նրանք զգում են, որ ուզում են վնասել իրենց կամ ուրիշներին:

CDPH տնօրենի գրասենյակ, MS 0500 | Փ.Բ. Արկո 997377 |
Սակրամենտո, Կալիֆորնիա 95899-7377
(916) 558-1700 | (916) 558-1762 (ֆաքս)
Ինտերնետային հասցե՝ www.cdph.ca.gov

